ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2016թ.

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության մասին 4

Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն 7

Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումները..... 15

Գլուխ 3.1 Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների իրականացման ընթացքի վերլուծություն 23

Գլուխ 4. Հանձնաժողովի գործունեության ֆինանսական հաշվետվություն 25

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2015 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը կազմվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթներին համապատասխան:

Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղվել է «Հանձնաժողովի 2015 թվականի տարեկան գործունեության ծրագրի» կատարմանը, Օրենքով ամրագրված գործառույթների իրականացմանը և միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառին առնչվող պարտավորությունների կատարմանը:

Առկա հիմնախնդիրների լուծման նպատակով Հանձնաժողովը 2015 թվականին շարունակել է աշխատանքները հետևյալ հիմնական ուղղություններով.

ա) տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման,

բ) տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպքերի քննարկման և համապատասխան որոշումների ընդունման,

գ) Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների դատական կարգով բողոքարկմանն ակտիվ մասնակցության ցուցաբերման,

դ) Օրենքում փոփոխությունների և լրացումների կատարման, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից ենթաօրենսդրական ակտերի (կարգերի) ընդունման և կատարելագործման,

ե) ապրանքային շուկաներում դիտանցումների, վերլուծությունների և ուսումնասիրությունների միջոցով Օրենքի հնարավոր խախտումների բացահայտման, կանխման և արգելման,

զ) ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության նպատակով մրցակցության խրախուսմանը նպաստման,

է) պետական մարմինների, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության,

ը) Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության ապահովման, հասարակության իրազեկման:

Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ

Հիմք ընդունելով ներածությունում ամրագրված հիմնական ուղղությունները, սույն գլխում ներկայացված են համառոտ տեղեկություններ Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ:

Օրենքով սահմանված իր գործառույթների շրջանակում 2015 թվականի ընթացքում Հանձնաժողովն ընդունել է գերիշխող դիրքի չարաշահման, չհայտարարագրված համակենտրոնացումների, անբարեխիղճ մրցակցության և այլ իրավախախտումների վերաբերյալ պատասխանատվության միջոց սահմանող 95 որոշում:

Հանձնաժողովը 2015 թվականի ընթացքում ևս իր ուշադրությունն առավել կենտրոնացրել է սոցիալական նշանակություն ունեցող ապրանքային շուկաներում և երկրի տնտեսության համար կարևոր ոլորտներում առկա մրցակցային խնդիրների բացահայտման վրա: Մասնավորապես, աշխատանքներ են իրականացվել ապրանքային շուկաներում մուտքի խոչընդոտների բացահայտման և կանխարգելման, պետական գնումների կազմակերպման գործընթացում մրցակցային օրենսդրության խախտումների ուղղությամբ:

Հանձնաժողովի կողմից հաշվետու տարվա ընթացքում հայտնաբերվել են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից մրցակցային օրենսդրության խախտման դեպքեր, որոնց առնչությամբ Հանձնաժողովը կայացրել է համապատասխան որոշումներ և կիրառել պատասխանատվության միջոցներ:

Հանձնաժողովը 2015 թվականի ընթացքում իրականացրել է բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք ուղղված են եղել տնտեսության տարբեր ոլորտներում և ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակի գնահատմանը, ինչպես նաև դրանցում առկա մրցակցությանը խոչընդոտող հանգամանքների բացահայտմանը:

Հանձնաժողովն իրականացրել է աշխատանքներ համակենտրոնացումների կարգավորման ուղղությամբ, որոնք միտված են ապրանքային շուկաներում մրցակցային պայմաններ ապահովելուն և մրցակցությունը սահմանափակող, ինչպես նաև գերիշխող դիրքի հանգեցնող կամ այդ դիրքն ամրապնդող գործարքների նկատմամբ հսկողություն իրականացնելուն: Ի դեպ, վերջին տարիներին զգալի աճ է նկատվել համակենտրոնացումներին առնչվող վարչական վարույթների հարուցման առումով, ինչը պայմանավորված է Հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտների և հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացմամբ: Միաժամանակ, Օրենքի հնարավոր խախտումների բացահայտման նպատակով, Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հիման վրա տարվա ընթացքում կատարվել են ուսումնասիրություններ՝ տնտեսվարող սուբյեկտների միացումների, միաձուլումների, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի, ակտիվների ձեռքբերումների և այլ միավորումների վերաբերյալ:

Հանձնաժողովը 2015 թվականի ընթացքում բացահայտել է նաև անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բազմաթիվ դեպքեր, որոնց առնչությամբ Հանձնաժողովի կողմից կիրառվել են համապատասխան պատասխանատվության միջոցներ, ինչպես նաև տրվել խախտումները դադարեցնելու և հետագայում դրանք բացառելու հանձնարարականներ:

Շարունակվել է համագործակցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ) հետ, որի շրջանակներում Հանձնաժողովի կողմից կազմակերպվել են փոխադարձ այցեր, քննարկվել են մի շարք ապրանքային

շուկաներում կատարվող ուսումնասիրություններին առնչվող մեթոդաբանությանը և առկա փորձի փոխանակմանը վերաբերող հարցեր:

Հանձնաժողովի և ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի միջև համագործակցության շրջանակներում ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի աշխատակիցները փորձի փոխանակման նպատակով հրավիրվել և մասնակցել են Հանձնաժողովի կողմից կազմակերպված սեմինարներին, քննարկումներին: Հանձնաժողովի և ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի նախագահների միջև ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի աշխատակիցները գործուղվել են Հանձնաժողով՝ մասնակցելու իրականացվող վարչական վարույթներին:

Հանձնաժողովի գործունեությունն առավել հրապարակային և թափանցիկ դարձնելու նպատակով, 2015 թվականի ընթացքում Հանձնաժողովն ակտիվորեն գործել է ծրագրային առաջնահերթությունների, մրցակցության ոլորտում իրականացված աշխատանքների և դրանց արդյունքների վերաբերյալ հասարակության իրազեկման ուղղությամբ:

Զանգվածային լրատվական միջոցների հետ սերտ համագործակցության շնորհիվ, հասարակությունը մշտապես իրազեկվել է տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, Հանձնաժողովի նիստերի, պաշտոնական հանդիպումների և այցերի մասին: Առավել կարևոր և հրատապ թեմաների շուրջ լրագրողների համար կազմակերպվել են տեղեկատվական բրիֆինգներ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ մամուլի ասուլիսներ: Մշտապես լուսաբանվել են նաև Հանձնաժողովի նախագահի և աշխատակազմի միջազգային հանդիպումները՝ հանրությանը տեղեկացնելով այցի նպատակների, քննարկվող հարցերի, ինչպես նաև ձեռքբերված արդյունքների մասին: Նախորդ տարի ակտիվ աշխատանքներ են իրականացվել հատկապես Եվրասիական տնտեսական միությանը (այսուհետ՝ ԵԱՏՄ) անդամակցության շրջանակներում կատարված օրենսդրական փոփոխությունների, ԵԱՏՄ գործընկերների հետ համագործակցության, ինչպես նաև փոխադարձ իրականացվող աշխատանքների իրազեկման վերաբերյալ:

Հանձնաժողովի աշխատանքների արդյունավետությունն ու օպերատիվությունն առավել բարձրացնելու նպատակով, տարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, կլոր-սեղանի ձևաչափով քննարկումներ՝ շահագրգիռ կողմերի, միջազգային և տեղական փորձագետների, ինպես նաև տնտեսական ոլորտը լուսաբանող լրագրողների մասնակցությամբ: Բացի այդ, ոլորտի խնդիրների վերաբերյալ ամբողջական և խորը տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահից և աշխատակազմից իրենց հուզող հարցերի պատասխանները լսելու նպատակով, հատուկ լրագրողների համար կազմակերպվել են արտագնա սեմինար-քննարկումներ, որոնք լայնորեն լուսաբանվել են բոլոր առաջատար լրատվամիջոցներով:

Հանձնաժողովը շարունակել է աշխատել նաև հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ տեղեկատվական նյութերի, քարոզչական հոլովակների, ինչպես նաև տարբեր հարցազրույցների միջոցով վերջիններիս տեղեկացնելով Հանձնաժողովի գործառույթների, լիազորությունների և առաջնահերթ խնդիրների մասին:

Հանձնաժողովի աշխատանքների օպերատիվության և արդյունավետության բարձրացմանը մեծապես նպաստել է գործող թեժ գիծը, որի միջոցով տարեցտարի ավելի շատ քաղաքացիներ են ահազանգում մրցակցային իրավախախտումների մասին, ինչը Հանձնաժողովին հնարավորություն է տալիս առանց լրացուցիչ ռեսուրսներ ծախսելու տեղեկանալ առկա խնդիրներին և համապատասխան քայլեր իրականացնելու՝ դրանց լուծման ուղղությամբ:

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է նաև տարբեր միջազգային կառույցների հետ՝ տնտեսական մրցակցության բնագավառում ՀՀ կողմից միջազգային

պայմանագրերով ստանձնած իր իրավասությունների շրջանակում պարտավորությունների կատարման, փորձի փոխանակման, օրենսդրության կատարելագործման, աշխատակիցների վերապատրաստման և ինտեգրման գործընթացի խթանման նպատակով: Այդ կապակցությամբ, հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովը կատարել է հետևյալ աշխատանքները.

1. Հայաստանի Հանրապետության՝ ԵԱՏՄ-ին անդամակցության շրջանակներում Հանձնաժողովի կողմից կատարվել են մի շարք համատեղ աշխատանքներ անդրսահմանային շուկաներում ԵԱՏՄ անդամ-պետությունների տնտեսվարող սուբյեկտների կողմից մրցակցության ընդհանուր կանոնների խախտման փաստերի բացահայտման, միջազգային բջջային կապի (ռոումինգի) ծառայությունների «արդար ռոումինգի» համակարգի ներդրման, իրավական ակտերի մշակման, առանձին ապրանքային շուկաներում ուսումնասիրությունների իրականացման ուղղություններով: Նշված ուսումնասիրությունների շրջանակում ներկայումս աշխատանքները շարունակվում են: Հանձնաժողովի նախաձեռնությամբ ԵԱՏՄ գործընկեր երկրների հետ ներկայումս քննարկվում են հայկական ընկերությունների կողմից ԵԱՏՄ անդամ մյուս պետությունների պետական գնումներին մասնակցության խոչընդոտների վերացման հարցերը, որոնց ուղղությամբ կատարվող աշխատանքներն ընթացքի մեջ են:

2. ԱՊՀ անդամ-պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամակցության շրջանակում Հանձնաժողովը մասնակցել է Խորհրդի ներքո գործող ԱՊՀ անդամ-պետություններում հակամենաշնորհային օրենսդրության խախտման համատեղ ուսումնասիրությունների շտաբի կողմից էկոնոմ կարգի բնակելի շենքերի շինարարության, ցորենի, ոչ մետաղական շինարարական նյութերի և մի շարք այլ ապրանքային շուկաներում, ինչպես նաև Խորհրդի ներքո գործող Գովազդի կոորդինացիոն խորհրդի կողմից կատարվող համատեղ ուսումնասիրություններին:

3. Հանձնաժողովը, միջազգային համագործակցության շրջանակներում, մի շարք հանդիպումներ և քննարկումներ է ունեցել Արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացուցիչների հետ, մասնակցել է ՀՀ-ԵՄ գործընկերության ու համագործակցության համաձայնագրի, Արևելյան գործընկերության շրջանակներում նոր համաձայնագրի շուրջ բանակցային գործընթացներին, Միջազգային մրցակցության ցանց (ՄՄՑ/ICN) կազմակերպության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ/OECD) Բուդապեշտում մրցակցության հարցերով տարածաշրջանային կենտրոնի կողմից կազմակերպվող քննարկումներին, աշխատաժողովներին և այլն: Հանձնաժողովը ակտիվ համագործակցություն է ունեցել նաև երկկողմ գործընկերության շրջանակներում, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, Գերմանիայի և այլ երկրների մրցակցության մարմինների հետ:

4. Հանձնաժողովը տնտեսական մրցակցության քաղաքականության կիրարկման քարոզչության, Հանձնաժողովի կադրային ներուժի հզորացման, կարողությունների զարգացման նպատակով շարունակել է համագործակցությունը Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀ/GIZ) հետ: Համագործակցության շրջանակում ապահովվել է Հանձնաժողովի աշխատակիցների մասնակցությունը միջազգային համաժողովներին, ինչպես նաև 2015 թվականի հունիսի 20-ից 21-ը Ծաղկաձորում առանձին թիրախային խմբերի համար կազմակերպվել է «Մրցակցային խնդիրները զբոսաշրջության ոլորտում» արտագնա կլոր-սեղան ձևաչափով քննարկում:

Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն

Նպատակ ունենալով ՀՀ-ում ձևավորել արդյունավետ մրցակցային միջավայր՝ Հանձնաժողովը պարբերաբար իրականացնում է առանձին ապրանքային շուկաների ուսումնասիրություններ, որոնց միջոցով նաև հսկողություն է սահմանում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթների պահպանման նկատմամբ: Տնտեսության բազմաթիվ ոլորտների ապրանքային շուկաներում Հանձնաժողովի կողմից կատարվող ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս վերհանել դրանցում առկա մրցակցային խնդիրները և տալ գործուն լուծումներ:

Հանձնաժողովը 2015 թվականի ընթացքում, ի թիվս այլ ոլորտների և ապրանքային շուկաների, ուսումնասիրել է նաև նպարեղենի, մսամթերքի, բենզինի շրջանառության և երկաթուղային փոխադրումների բնագավառները:

Հանձնաժողովի կողմից մսամթերքի և նպարեղենի շրջանառության բնագավառներում կատարված ուսումնասիրությունների շրջանակներում դիտարկվել են արտադրության, ներմուծման և իրացման ընդհանուր պայմանները, որոնք նպատակ են հետապնդել վերհանել տվյալ բնագավառում գործող ընկերությունների մրցակցային վարքագծին առնչվող խնդիրները, այդ թվում՝ գործարարության զարգացմանը խոչընդոտող գործոնները, որոնց լուծումը կհանգեցնի ոլորտում գործող ընկերությունների թվի ավելացմանը և կխորացնի տարբեր ընկերությունների միջև մրցակցային պայքարն ապրանքների իրացման ծավալների ընդլայնման, որակի բարձրացման ապահովման և իրացման մատչելի գնի սահմանման համար:

Այսպես, Հանձնաժողովի կողմից ուսումնասիրության շրջանակներում վերլուծության են ենթարկվել 2013-2014 թվականների և 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում նպարեղենի (բրինձ, հնդկաձավար, ոսպ, ոլոռ, սիսեռ և այլն) շրջանառության ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների արտադրությանը, ներմուծմանը և իրացմանը վերաբերող ցուցանիշները: Համաձայն կատարված վերլուծության արդյունքների՝ նշված ժամանակահատվածներում իրացման ցուցանիշներով առաջատար ընկերություններ են հանդիսացել «Անուշ Լինի», «Մառանիկ», «Ալեքս Գրիգ», «Լաքի Իգլ» և «Ինվեստ-ինտորգ» ՍՊ ընկերությունները, որոնցից առավելագույն իրացման ծավալներ ունեցող մասնակցի մասնաբաժինը կազմում է 20 տոկոս (տես՝ Աղյուսակ N 1):

Աղյուսակ N 1

Նպարեղենի ներմուծման և իրացման ոլորտում 2014 թվականի ընթացքում տնտեսվարող սուբյեկտների մասնաբաժինները

Հ/հ	Տնտեսվարող սուբյեկտի անվանումը	Ներմուծման ծավալներ (տոննա)		Իրացման ծավալ (տոննա)	Տեսակարար կշիռ
1	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	3,032		3,396	20.3%
2	«Անուշ լինի» ՍՊԸ	3,169		2,760	16.5%
3	«Մառանիկ» ՍՊԸ	1,836		1,843	11.0%
4	«Լաքի Իգլ» ՍՊԸ	1,894		1,715	10.2%
5	«Ինվեստ-ինտորգ» ՍՊԸ	1,421		1,652	9.9%
6	«Գոռհակ Թրեյդ» ՍՊԸ	870		1,069	6.4%
7	«Լիա-Կ Գրուպ» ՍՊԸ	945		1,033	6.2%
8	«Էրիզ» ՍՊԸ	936		908	5.4%
9	«Սվետա» ՍՊԸ	260		268	1.6%
10	«Աբաֆ» ՍՊԸ	179		186	1.1%
Այլ տնտեսվարող սուբյեկտներ		2,614		1,921	11.5%
Ընդամենը		**17,156**		**16,751**	**100%**

Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից իրացվող նպարեղենի գնի (առանց անուղղակի հարկեր) և ինքնարժեքի տարբերությունը չի գերազանցում 16 տոկոսը: Միաժամանակ տնտեսվարող սուբյեկտների կողմից կատարվում են նաև իրացման, վարչական, ֆինանսական և այլ ծախսեր, իսկ դրանք ինքնարժեքի հետ միասին դիտարկելու պարագայում, տնտեսվարող սուբյեկտների եկամտաբերությունների մակարդակները կարող են լինել տարեկան 5 տոկոսից ցածր, ինչն իր հերթին վկայում է ոլորտում առկա մրցակցությունը կտրուկ աճել է: Ուսումնասիրությունը փաստում է, որ ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտները, որպես կանոն, ներմուծում և իրացնում են նպարեղենի ոլորտի հիմնական ապրանքատեսակները: Վերը նշվածը ցույց է տալիս, որ տնտեսվարող սուբյեկտները կարողանում են ազատորեն, առանց մուտքի խոչընդոտների զբաղվել այս կամ այն տեսակի նպարեղենի ներմուծմամբ և իրացմամբ, իսկ նպարեղենի առանձին տեսակների ներմուծումը և իրացումը բաժանված չէ տնտեսվարող սուբյեկտների միջև: Միաժամանակ ոլորտում ձևավորված մրցակցային միջավայրի մասին է վկայում այն հանգամանքը, որ դիտարկվող ժամանակահատվածում ներմուծող տնտեսվարող սուբյեկտների մասնաբաժինները ենթարկվել են փոփոխությունների և ոլորտում հայտնվել են նաև նոր մրցակից ընկերություններ:

Հանձնաժողովը դիտարկել է նաև շուկայում նպարեղենի իրացման ծավալների ավելացման վրա ազդող հիմնական գործոնները: Հանդիսանալով լայն սպառման ապրանքներ՝ սպառողների կողմից կատարվող ընտրության հարցում էական կարևորություն է ստանում դրանց գինը, իսկ այն ընկերությունները, որոնք առաջարկում են ցածր գին, կարողանում են ապահովել իրացման մեծ ծավալներ: Հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նպարեղենի իրացման ցածր գին առաջարկելու հնարավորությունները պայմանավորված են մեծ ֆինանսական ռեսուրսների առկայությամբ, ինչը հիմնականում կարողանում են ապահովել խոշոր ընկերությունները:

Հանձնաժողովի կողմից դիտարկվել են նաև ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների գործունեության իրականացման համար խոչընդոտ հանդիսացող գործոնները: Ըստ այդմ, նպարեղենի ներմուծման և իրացման համար առավել խնդրահարույց գործոններն են խոշոր ֆինանսական ներդրումների անհրաժեշտությունը, ոչ բավարար եկամտաբերությունը և նպարեղենի փչացումից առաջացող կորուստները, որոնք հաճախ դրսևորվում են շուկայական տնտեսության պայմաններում և տնտեսական մրցակցության օրենսդրության տեսանկյունից շուկայի մուտքի խոչընդոտներ չեն համարվում: Ֆինանսական միջոցների հասանելիության տեսանկյունից տնտեսվարող սուբյեկտների կողմից առավել կարևորվել են դրամային վարկային միջոցների հասանելիությունը, որը, ըստ ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների շուրջ 60 տոկոսի, դժվար հասանելի է: Բացի այդ, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված 2015 թվականին նախորդ տարիների համեմատ ավելացել է ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների քանակը, ինչը վկայում է մրցակցության խորացման և սպառողների համար լայն ընտրության հնարավորության ապահովման մասին: Կատարված ուսումնասիրության շրջանակներում մրցակցության սահմանափակման դեպքեր չեն բացահայտվել:

Հանձնաժողովն ուսումնասիրություններ է կատարել նաև մսամթերքի (խոզի, տավարի, հավի միս) շրջանառության բնագավառում՝ դիտարկելով 2013-2014 թվականների և 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների ցուցանիշները: Համաձայն վերլուծության, իրացման ցուցանիշներով ոլորտում առավել խոշոր ծավալներ են ունեցել «Ալեքս-Գրիգ» և «Արմեն-

Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊ ընկերությունները: Մասնավորապես խոզի և տավարի մսի իրացման ցուցանիշներով առաջատար ընկերություններ են համարվում «Ալեքս Գրիգ» և «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊ ընկերությունները, որոնցից յուրաքանչյուրի իրացման մասնաբաժինը կազմում է շուրջ 4-ական տոկոս (տես՝ Աղյուսակ N 2 և Աղյուսակ N 3):

Աղյուսակ N 2

Խոզի մսի իրացման ոլորտում 2013 և 2014 թվականների ընթացքում տնտեսվարող սուբյեկտների և գյուղացիական տնտեսությունների մասնաբաժինները

Հ/հ	Տնտեսվարող սուբյեկտի անվանումը	Իրացման ծավալ (տոննա)	Տեսակարար կշիռ		Իրացման ծավալ (տոննա)	Տեսակարար կշիռ
		2013 թվական			2014 թվական	
1	«Արմեն Համիկ եղբայրներ» Հ/Ձ ՍՊԸ	1,161	5.7%		839	3.6%
2	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	492	2.4%		821	3.5%
3	«Բի և Ջի ֆուդ» ՍՊԸ	760	3.7%		517	2.2%
4	«Կյուքս Էռա Գրուպ» ՍՊԸ	230	1.1%		429	1.8%
5	«Գոռ Հակ Թրեյդ» ՍՊԸ	245	1.2%		346	1.5%
6	«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ	498	2.5%		294	1.3%
7	«Ջի Էս Ընդ Վիզի Գրուպ» ՍՊԸ	224	1.1%		158	0.7%
8	«Ամոկա Գլաս» ՍՊԸ	0	0.0%		91	0.4%
9	«Միթ Իմփորթ» ՍՊԸ	0	0.0%		67	0.3%
10	«Մուշ» ՍՊԸ	0	0.0%		52	0.2%
11	«Աթենք» ՍՊԸ	0	0.0%		23	0.1%
Այլ ներմուծող տնտեսվարող սուբյեկտներ		4,088	20.1%		2,857	15.4%
Գյուղացիական տնտեսություններ[1]*		12,600	62.1%		16,200	69.1%
Ընդամենը		**20,298**	**100%**		**22,694**	**100%**

Աղյուսակ N 3

Տավարի մսի իրացման ոլորտում 2013 և 2014 թվականների ընթացքում տնտեսվարող սուբյեկտների և գյուղացիական տնտեսությունների մասնաբաժինները

Հ/հ	Տնտեսվարող սուբյեկտի անվանումը	Իրացման ծավալ (տոննա)	Տեսակարար կշիռ		Իրացման ծավալ (տոննա)	Տեսակարար կշիռ
		2013 թվական			2014 թվական	
1	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	1,599	2.7%		2,385	3.7%
2	«Արմեն-Համիկ Եղբայրներ» Հ/Ձ ՍՊԸ	971	1.6%		704	1.1%
3	«Սմայլ» ՍՊԸ	0	0.0%		188	0.3%
4	«Ջի Էս Ընդ Վիզի գրուպ» ՍՊԸ	70	0.1%		124	0.2%

[1] *Գյուղացիական տնտեսությունների կողմից խոզի, տավարի մսի արտադրության ծավալները վերցվել են ՀՀ ԱՎԾ հրապարակումներից: Հաշվի առնելով, որ գյուղացիական տնտեսությունների կողմից խոզի, տավարի մսի իրացման ծավալների հաշվառում չի կատարվում, ուստի խոզի, տավարի մսի արտադրության ծավալը համարվել է իրացում՝ ելնելով այն հանգամանքից, որ խոզի, տավարի միսը համարվում է շուտ փչացող ապրանք, վերջինիս պահպանման համար անհրաժեշտ են սառնարաններ, իսկ գյուղացիական տնտեսությունները հիմնականում չունեն անհրաժեշտ սառնարաններ:

5	«Լյուքս էռա Գրուպ» ՍՊԸ	0	0.0%		84	0.1%
6	«Բի և Ջի ֆուդ» ՍՊԸ	0	0.0%		52	0.1%
7	«Դիուս» ՍՊԸ	136	0.2%		52	0.1%
Այլ ներմուծող տնտեսվարող սուբյեկտներ		2,783	4.7%		1262	2.0%
Գյուղացիական տնտեսություններ*		53,600	90.6%		59,000	92.4%
Ընդամենը		**59,159**	**100%**		**63,850**	**100%**

Ինչ վերաբերում է հավի մսի իրացմանը, ապա դրանում առավել մեծ մասնաբաժին ունի «Ալեքս Գրիգ» ՍՊ ընկերությունը, որի իրացման մասնաբաժինը կազմում է 55 տոկոս (տես՝ Աղյուսակ N 4):

Աղյուսակ N 4

Հավի մսի իրացման ոլորտում 2013 և 2014 թվականի ընթացքում տնտեսվարող սուբյեկտների մասնաբաժինները

Հ/հ	Տնտեսվարող սուբյեկտի անվանումը	Իրացման ծավալ (տոննա)	Տեսակարար կշիռ		Իրացման ծավալ (տոննա)	Տեսակարար կշիռ
		2013 թվական			2014 թվական	
Ներմուծող տնտեսվարող սուբյեկտներ						
1	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	20,204	42.2%		23,572	55.0%
2	«Ա և Գ» ՍՊԸ	11079	23.2%		1961	4.6%
3	«Արմեն Համիկ Եղրայրներ» Հ/Ձ ՍՊԸ	1,961	4.1%		1,529	3.6%
4	«Գոռ Հակ Թրեյդ» ՍՊԸ	399	0.8%		816	1.9%
5	«Վիեգո» ՍՊԸ	101	0.2%		730	1.7%
6	«Դիուս» ՍՊԸ	968	2.0%		715	1.7%
7	«Դոնմալ» ՍՊԸ	101	0.2%		543	1.3%
8	«Կոմսալ» ՍՊԸ	241	0.5%		419	1.0%
9	«Վիոքսի Գրուպ» ՍՊԸ	853	1.8%		335	0.8%
Այլ ներմուծող տնտեսվարող սուբյեկտներ		4,908	10.3%		3,456	8.1%
Ընդամենը		**40,815**	**85.3%**		**34,076**	**79.5%**
Արտադրող տնտեսվարող սուբյեկտներ						
1	«Արաքս» ՓԲԸ	2,050	4.3%		2,655	6.2%
2	«Տեղական» ՍՊԸ	32	0.1%		933	2.2%
3	«Անդրե Րենթեր» ՍՊԸ	778	1.6%		649	1.5%
4	«Ագրոթեք Ինվես» ՍՊԸ	0	0.0%		386	0.9%
Այլ արտադրող տնտեսվարող սուբյեկտներ		4147	8.7%		4147	9.7%
Ընդամենը		**7,007**	**14.7%**		**8,770**	**20.5%**
Ընդհանուր		**47,822**	**100.0%**		**42,846**	**100%**

Ինչպես նպարեղենի շրջանառության բնագավառում, տվյալ դեպքում ևս իրացման վրա էական ազդեցություն են թողնում ապրանքների գները և շուկայում առավել մրցունակ են այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք կարողանում են ապահովել ցածր ինքնարժեք և սպառողներին ապրանքներն առաջարկել ցածր գներով:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ մսամթերքը ցածր գներով

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ մսամթերքը ցածր գներով առաջարկելու հնարավորությունը պայմանավորված է ֆինանսական ռեսուրսների առկայությամբ և նվազագույն շահութաբերությամբ աշխատելու հնարավորությամբ: Կատարված ուսումնասիրության համաձայն խոզի և տավարի մսի իրացման կառուցվածքում ավելի մեծ է տեղական արտադրության մսի մասնաբաժինը և սպառողները հիմնականում նախապատվություն են տալիս տեղական արտադրության մսին, իսկ ներմուծվող միսը հիմնականում սպառվում է վերամշակող ձեռնարկությունների կողմից: Ի տարբերություն վերը նշվածի՝ այլ է պատկերը հավի մսի դեպքում, քանի որ հավի մսի ներմուծման ծավալները մինչև 4 անգամ գերազանցում են տեղական արտադրության համապատասխան ցուցանիշները: Միաժամանակ Հանձնաժողովում առկա տվյալների համաձայն ՀՀ հավի միս ներմուծվում է հիմնականում ԱՄՆ-ից, որտեղից ներմուծված հավի մսի ինքնարժեքը բավականին ցածր է տեղական արտադրության հավի մսի ինքնարժեքից: Այս պատճառով էլ հավի միս ներմուծող ընկերությունները կարողանում են առաջարկել իրացման ցածր գներ և ապահովել իրացման մեծ ծավալներ:

Հանձնաժողովի կողմից դիտարկվել են նաև ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների գործունեության իրականացման համար խոչընդոտ հանդիսացող գործոնները: Ըստ այդմ՝ տնտեսվարող սուբյեկտների շրջանում կատարված հարցումների արդյունքում պարզվել է, որ մսամթերքի շրջանառության ոլորտում արտադրության, ներմուծման և իրացման ծավալների ընդլայնման համար առավել խնդրահարույց գործոններ են խոշոր ֆինանսական ներդրումների անհրաժեշտությունը, փչացումից առաջացող կորուստները և ոչ բավարար եկամտաբերությունը: Ուսումնասիրությունները փաստում են, որ առհասարակ մսամթերքի ներմուծման բնագավառում ապրանքների առավել ցածր ինքնարժեք ունենում են խոշոր խմբաքանակներով ներմուծող տնտեսվարող սուբյեկտները, որոնք էլ տեղական շուկայում կարողանում են առաջարկել առավել մրցունակ գներ: Ըստ էության, խոշոր խմբաքանակներով ներմուծմանն առնչվող հիմնական խոչընդոտներն են ֆինանսական միջոցների ներգրավման հասանելիության ցածր մակարդակը և փչացումից առաջացող մեծ կորուստները: Հետևապես մսամթերք վերամշակող ընկերությունների համար հաճախ առավել ձեռնտու է միսը ձեռքբերել երկրի ներսում խոշոր ներմուծողներից, որոնք առաջարկում են նաև տարաժամկետ վճարման պայմաններ, քան այն ներմուծել սեփական միջոցներով:

Հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մսի վերոնշյալ տեսակների ներմուծմամբ և իրացմամբ զբաղվելու համար հիմնականում սահմանափակումներ առկա չեն և տնտեսվարողներն ազատորեն կարողանում են կատարել ցանկացած տեսակի մսի ներմուծումներ և իրացումներ: Բացառություն են կազմում մսամթերքի ներմուծման երկրների մասով առկա որոշակի սահմանափակումները: Մասնավորապես ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից հրապարակվում է երրորդ երկրների կազմակերպությունների ցանկը, որտեղից թույլատրվում է ներմուծել համապատասխան ապրանքը:

Ըստ էության անհրաժեշտ է նշել, որ վերոնշյալ սահմանափակումները որոշակիորեն կարող են բացասաբար անդրադառնալ ոլորտի մրցակցային միջավայրի վրա, քանի որ փոքր ֆինանսական հնարավորություններ ունեցող ընկերությունները կարող են զրկվել նշված ցանկում ներառված մատակարարներից ապրանքներ ձեռքբերելու հնարավորությունից: Միաժամանակ անհրաժեշտ է փաստել, որ մատակարարների վերաբերյալ առկա սահմանափակումներն ունեն օբյեկտիվ բնույթ և պայմանավորված են սննդամթերքի անվտանգության պայմանների ապահովմամբ:

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովի մշտական վերահսկողության ներքո

է գտնվել բենզինի շուկան: Հանձնաժողովի կողմից կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ 2014-2015 թվականների և 2016 թվականի առաջին եռամսյակի ընթացքում արձանագրվել է բենզինի ձեռքբերման գների նվազեցում, որն ուղեկցվել է նաև վաճառքի գների փոփոխությամբ: Մասնավորապես, 2014 թվականի հունվար-փետրվար ամիսներին ռեգուլյար տեսակի բենզինի 1 լիտրի մանրածախ վաճառքի գինը կազմել է 480 դրամ, իսկ 2016 թվականի մարտ ամսին՝ 370 դրամ: Այսինքն, դրամային արտահայտությամբ ռեգուլյար տեսակի բենզինի մանրածախ գները նվազել են մինչև 23 տոկոսով: Միաժամանակ նկատի ունենալով այն հանգամանքը, որ բենզինը ՀՀ ներմուծվում է արտերկրից, ուստի ազգային արժույթի փոխարժեքի փոփոխությունը ևս էական ազդեցություն է թողնում ՀՀ-ում բենզինի գնագոյացման վրա: Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ ԱՄՆ դոլարով արտահայտված ռեգուլյար տեսակի բենզինի մանրածախ գները 2014 թվականի հունվար-2015 թվականի դեկտեմբեր ամիսներին նվազել է շուրջ 32 տոկոսով: Ներկայացված ցուցանիշները, ընդհանուր առմամբ, համադրելի են ներմուծող ընկերությունների կողմից ռեգուլյար տեսակի բենզինի ձեռքբերման գների փոփոխությանը, և անհրաժեշտ է փաստել, որ դիտարկված ժամանակաշրջանում ներմուծող ընկերություններում ռեգուլյար տեսակի բենզինի ձեռքբերման գների և մանրածախ վաճառքի գների միջև տարբերությունը (մարժա) մնացել է գրեթե նույն մակարդակի վրա:

Ուսումնասիրության ընթացքում համեմատական վերլուծություն է իրականացվել նաև եվրոպական երկրներում բենզինի մանրածախ իրացման գների վերաբերյալ (տես՝ Աղյուսակ N 5): Մասնավորապես, Ֆրանսիայում 2016 թվականի հունվար ամսին 2015 թվականի հունվար ամսվա համեմատ բենզինի իրացման մանրածախ գները 1 լիտրի հաշվով նվազել են 1 տոկոսով՝ 1.30 եվրոյից դառնալով 1.29 եվրո, իսկ Գերմանիայում նվազեցումը կազմել է 5 տոկոս՝ 1.32-ից դառնալով 1.25 եվրո: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա պետք է նշել, որ 2016 թվականի հունվար ամսին նախորդ տարվա հունվար ամսվա համեմատ ռեգուլյար տեսակի 1 լիտր բենզինի՝ եվրոյով արտահայտված գները նվազել են 11 տոկոսով՝ 0.83 եվրոյից դառնալով 0.74 եվրո:

Հանձնաժողովն ուսումնասիրության շրջանակներում դիտարկել է նավթի գների փոփոխության ազդեցությունն առանձին երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում բենզինի մանրածախ գների վրա: Մասնավորապես, ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում բենզինի գների ուսումնասիրությունից պարզվել է, որ այդ երկրներում բենզինի գնի կառուցվածքում հում նավթի արժեքն ունի բավականին մեծ տեսակարար կշիռ: Այսպես, օրինակ ԱՄՆ-ում բենզինի մանրածախ գնի շուրջ 65 տոկոսը կազմում է նավթի արժեքը, իսկ եվրոպական երկրներում նավթի արժեքը ձևավորում է բենզինի մանրածախ գնի շուրջ 35 տոկոսը: Ինչ վերաբերում է ՀՀ-ում իրացվող բենզինի մանրածախ գներին, ապա դրանց հիմնական մասը ձևավորում են հարկերը, տրանսպորտային և այլ ծախսերը, իսկ նավթի արժեքը կազմում է ընդամենը 5-10 տոկոս: Այս պատճառով միջազգային շուկաներում նավթի գների փոփոխությունները ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում բենզինի գների վրա ավելի ուղղակի և մեծ ազդեցություն են ունենում, քան ՀՀ-ում:

Ընդհանուր առմամբ, կատարված հաշվարկների համաձայն 2015 թվականին բենզին ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից գնային փոփոխությունները համահունչ են եղել տնտեսական գործոնների փոփոխություններին, և 2015 թվականին բենզինի գծով ընկերությունների եկամտաբերությունը մնացել է միջին տարեկան եկամտաբերության մակարդակին:

Հանձնաժողովը 2015 թվականին ուսումնասիրել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության (այսուհետ՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերություն) կողմից իրականացվող գնումների գործընթացը՝ նպատակ ունենալով պարզելու ապրանքների և ծառայությունների ձեռքբերումների ընթացքում մրցակցության օրենսդրության

պահպանման հարցերը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ.

1. «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունը չի առաջնորդվել գնումների մասին օրենսդրությամբ, թեև պարտավոր էր մի շարք դեպքերում ապրանքների, ծառայությունների ձեռքբերումն իրականացնել մրցույթներով.
2. եթե նույնիսկ կազմակերպել է մրցույթներ, ապա դրանք կրել են ձևական բնույթ, քանի որ, օրինակ, շատ դեպքերում մրցույթներում հաղթող են ճանաչվել բարձր գին ներկայացրած ընկերությունները.
3. «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության կողմից իրականացված ներդրումների կառուցվածքը ուռճացված է, որի մեջ են ներառվել օրինակ կանաչապատման, բարեկարգման, ասֆալտապատման, վարչական շենքերի վերանորոգման և այլ աշխատանքները:

Բացահայտված խնդիրների մասին տեղեկատվությունը Հանձնաժողովը ներկայացրել է ՀՀ իրավասու մարմիններին: Բացի այդ, հաշվի առնելով, որ «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունը հանդիսանում է «Ռուսական Երկաթուղիներ» ԲԲԸ-ի դուստր ձեռնարկությունը, Հանձնաժողովը կատարված ուսումնասիրության արդյունքները տրամադրել է նաև ՌԴ դաշնային հակամենաշնորհային ծառայությանը:

Եվրոպական մի շարք երկրներում և ՀՀ-ում բենզինի մանրածախ գները 2015-2016 թվականների հունվար ամիսներին[2]

Հ/հ	Երկիրը	Հունվար-2015թ. (եվրո)	Հունվար-2016թ. (եվրո)	Փոփոխություն՝ 2016թ-ի հունվարը 2015թ-ի հունվարի նկատմամբ
1	ՀՀ*	0.83	0.74	**-11%**
2	Բելգիա	1.31	1.20	**-8%**
3	Սլովենիա	1.29	1.19	**-8%**
4	Լիտվա	1.12	1.04	**-8%**
5	Չեխիա	1.13	1.04	**-7%**
6	ՌԴ	0.43	0.40	**-7%**
7	Գերմանիա	1.32	1.25	**-5%**
8	Իտալիա	1.50	1.42	**-5%**
9	Մեծ Բրիտանիա	1.41	1.35	**-5%**
10	Հունգարիա	1.07	1.03	**-4%**
11	Նիդեռլանդներ	1.50	1.44	**-4%**
12	Ռումինիա	1.12	1.08	**-4%**
13	Հունաստան	1.42	1.37	**-3%**
14	Դանիա	1.41	1.37	**-3%**
15	Իսպանիա	1.15	1.12	**-2%**
16	Բուլղարիա	1.08	1.05	**-2%**
17	Ֆրանսիա	1.30	1.29	**-1%**
18	Էստոնիա	1.01	1.00	**-1%**
19	Ֆինլանդիա	1.39	1.38	**-1%**
20	Պորտուգալիա	1.33	1.33	**0%**

[2] Եվրոպական երկրներում բենզինի վերաբերյալ գները ներկայացված են համաձայն Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից վառելիքի շուկայում վարվող պետական վիճակագրության տվյալների, իսկ ՀՀ-ում եվրոյով արտահայտված բենզինի մանրածախ գների հաշվարկման համար հիմք են ընդունվել Երևան քաղաքում բենզին ներմուծող ընկերությունների բենզալցակայաններում Հանձնաժողովի արձանագրած մանրածախ գները, որոնք վերահաշվարկվել են եվրոյի՝ ըստ ՀՀ ԿԲ պաշտոնական միջին փոխարժեքի:

Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումներ

Հայաստանի Հանրապետությունում ազատ տնտեսական մրցակցությունը պաշտպանելու և խրախուսելու, ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը նպաստելու տեսանկյունից առավել քան կարևոր է գերիշխող դիրքի չարաշահումների և հակամրցակցային համաձայնությունների բացահայտման, կանխման, ինչպես նաև վերոնշյալ դրսևորումների դեմ արդյունավետ և հետևողական պայքարելու ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացումը:

Հակամրցակցային համաձայնությունների առումով խնդրո առարկա են հանդիսանում տարբեր ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների այնպիսի գործողությունները կամ վարքագիծը, որոնք հանգեցնում են մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

Ինչպես ցույց են տալիս համապատասխան միջազգային փորձը և այս ոլորտում նախկինում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները՝ հակամրցակցային համաձայնությունների առումով առավել ռիսկային է համարվում պետական գնումների ոլորտը՝ տնտեսվարող սուբյեկտների միջև մրցույթների կամ աճուրդների պայմանների, դրանց արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերման տեսանկյունից:

Տվյալ գործընթացում հնարավոր հակամրցակցային համաձայնությունների բացահայտման նպատակով Հանձնաժողովը շարունակել է լայնածավալ և համակողմանի ուսումնասիրությունները, որոնց շրջանակներում դիտարկվել է.

- ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով պետական գնումների շրջանակներում իրականացված շուրջ 411 մրցույթ,
- մարզպետարանների կողմից շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով իրականացված շուրջ 165 մրցույթ,
- Երևանի քաղաքապետարանի կողմից շինարարական աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով պետական գնումների շրջանակներում իրականացված շուրջ 680 մրցույթ,
- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից շինարարական աշխատանքների և գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված թվով 6 մրցույթ:

Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված բազմաթիվ խնդրահարույց հանգամանքներն իրենց բացասական ազդեցությունն են թողել մրցակցային միջավայրի վրա՝ պայմաններ ստեղծելով ազատ տնտեսական մրցակցության խաթարման համար: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունների ընթացքում ձեռքբերված իրավական ապացույցները և փաստական հանգամանքները բավարար չեն եղել մրցույթների մասնակից տնտեսվարող սուբյեկտների վարքագիծն Օրենքի իմաստով իրավախախտում դիտարկելու և նրանց պատասխանատվության ենթարկելու համար: Միևնույն ժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջիններիս դրսևորած վարքագիծը կարող էր հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը, անբարեխիղճ մրցակցության գործողությանը և վնաս հասցնել սպառողների շահերին, Հանձնաժողովը դիտարկված մրցույթների շրջանակներում խնդրահարույց վարքագիծ դրսևորած տնտեսվարող սուբյեկտներին տվել է զգուշացում, իսկ մրցույթների գծով արձանագրված խախտումների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել է գնումների ոլորտի լիազոր մարմիններին և պատվիրատու հաստատությունների վերադաս պետական մարմիններին:

Գերիշխող դիրքի չարաշահումների և հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման և/կամ բացահայտման նպատակով 2015 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները կենտրոնացվածության բարձր աստիճան և/կամ սոցիալական կարևոր նշանակություն ունեցող ապրանքային շուկաների նկատմամբ վերահսկողության ուղղությամբ՝ նպատակ ունենալով դրանցում ապահովել հավասար մրցակցային պայմաններ, նպաստել տնտեսվարող սուբյեկտների իրավունքների ու սպառողների շահերի պաշտպանությանը: Այսպես.

Հանձնաժողովը «Ջերմուկ Ինթերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթլեր» ՍՊ ընկերության (այսուհետ՝ «Պեպսի-Կոլա» ընկերություն) 2015 թվականի դիմումի հիման վրա իրականացրել է լայնածավալ ուսումնասիրություն գազավորված ըմպելիքների շրջանառության ոլորտում: Մասնավորապես, համաձայն դիմումատուի՝ «Կոկա-կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲ ընկերության (այսուհետ՝ «Կոկա-կոլա» ընկերություն) կողմից իրականացվող գործողությունների արդյունքում «Դալմա Գարդեն Մոլ» զվարճաառևտրային համալիրի սննդի սպասարկման տարածքում գործունեություն իրականացնող հանրային սննդի օբյեկտները լայնորեն իրացնում են վերջինիս կողմից մատակարարվող զովացուցիչ ըմպելիքները՝ հրաժարվելով «Պեպսի-Կոլա» ընկերության հետ համագործակցելուց: Հանձնաժողով ներկայացված դիրքորոշմամբ, նշված տարածքում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտները որպես «Պեպսի-Կոլա» ընկերության ըմպելիքները չիրացնելու պատճառ հիմնականում մատնանշել են տարածքի սահմանափակվածությունը և սպառողների շրջանում «Կոկա-կոլա» ընկերության ըմպելիքների ավելի մեծ պահանջարկ ունենալը: Մինչդեռ, համաձայն Հանձնաժողովի կողմից կատարված դիտանցումների, նշված տարածքում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մի մասն իրացնում է նաև բազմաթիվ այլ տնտեսվարողների ըմպելիքներ (հաճախ տեղադրելով վերջիններիս կողմից տրամադրվող սառնարանները), այդ թվում՝ համագործակցելով միևնույն ապրանքային շուկայում գործող մեկից ավելի տնտեսվարող սուբյեկտների հետ (օրինակ՝ բնական հյութեր, հանքային ջրեր, աղբյուրի ջրեր և այլն), որոնց նկատմամբ պահանջարկը հաճախ էականորեն տարբեր է: Հետևապես, որպես «Պեպսի-Կոլա» ընկերության ըմպելիքները չիրացնելու պատճառ տարածքի սահմանափակվածության և պահանջարկի գործոնների մատնանշումը Հանձնաժողովը հիմնականում համարել է անհիմն:

Հանձնաժողովն ուսումնասիրել է նաև «Կոկա-կոլա» ընկերության կողմից իրականացվող զեղչային, մարքեթինգային քաղաքականության, սարքերի և սարքավորումների տեղադրման պայմանագրերի կնքման, ինչպես նաև վերջինիս կողմից տնտեսվարող սուբյեկտներին մատակարարված ըմպելիքների դիմաց կատարվող վճարումների հետաձգումներին առնչվող հարցերը՝ հաշվի առնելով, որ նշված գործիքակազմի միջոցով կարող են պայմաններ ստեղծվել առևտրի օբյեկտներում «Կոկա-կոլա» ընկերությանը մրցակից տնտեսվարող սուբյեկտների ըմպելիքների ներկայացվածության սահմանափակման համար: Արդյունքում, Հանձնաժողովն արձանագրել է, որ «Կոկա-կոլա» ընկերության կողմից մարքեթինգային պայմանագրերի կնքումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ, ինչի արդյունքում տնտեսվարողներն ուղղակի կամ անուղղակի շահագրգռված են լինում համագործակցել վերջինիս հետ, ձեռք բերել և իրացնել նրա ապրանքները, հրաժարվել այլ մրցակիցների ըմպելիքներն իրացնելուց: Պարզվել է նաև, որ տնտեսվարող սուբյեկտներին զեղչեր տրամադրելիս և վճարման հետաձգման պայման կիրառելիս «Կոկա-կոլա» ընկերությունը չի ունեցել հստակ և հրապարակային չափանիշներ, իսկ որոշ դեպքերում զեղչեր տրամադրելիս փորձել է կարգավորել երկրորդային շուկայում իր կողմից արտադրված, ներմուծված և իրացված ըմպելիքների գները:

Հանձնաժողովը դիտարկել է նաև բրենդային սառնարաններ տեղադրած և սառնարաններ չտեղադրած տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվող գնային քաղաքականությունը և պարզել, որ «Կոկա-կոլա» ընկերության կողմից մատակարարվող ըմպելիքներն իրացվում են միևնույն գներով՝ անկախ վերավաճառողներին անհատույց սառնարան տրամադրելու հանգամանքից: Միաժամանակ պարզվել է, որ սառնարանների շահագործման արժեքը ներառված է մատակարարվող ըմպելիքների գնի մեջ: «Կոկա-կոլա» ընկերության իրականացրած քաղաքականության արդյունքում ստացվում է, որ սեփական ֆինանսական միջոցներով սառնարաններ ձեռքբերած կամ վարձակալած տնտեսվարող սուբյեկտները ստիպված են վճարել իրենց մրցակիցների կողմից շահագործվող սառնարանների ծախսերի մի մասը՝ հայտնվելով անհավասար մրցակցային միջավայրում:

Բացի այդ, Հանձնաժողովի կատարած ուսումնասիրությունները փաստում են մի էական հանգամանք ևս. «Կոկա-կոլա» ընկերությունը գործող պայմանագրերի շրջանակում հնարավորություն ունի կիրառել հայեցողական մոտեցում այն դեպքերում, երբ նկատում է իրեն պատկանող սառնարաններում այլ ընկերության (ներառյալ մրցակից) ապրանքների տեղադրման փաստեր: Միաժամանակ հաշվի առնելով, որ «Կոկա-կոլա» ընկերությունը գործունեություն է իրականացնում ոչ միայն գազավորված (կարբոնացված), քաղցրացված ըմպելիքների, այլ նաև հյութերի և այլ ըմպելիքների ապրանքային շուկաներում, ստացվում է, որ «Կոկա-կոլա» ընկերությունը մի կողմից տնտեսվարող սուբյեկտներին անհատույց տալիս է սառնարաններ և չի թույլատրում դրանցում այլ ըմպելիքների ցուցադրությունը, մյուս կողմից օգտագործում է իր առավել լայն ճանաչում ունեցող ապրանքանիշերն իր կողմից մատակարարվող այլ ապրանքային շուկաներին դասվող ըմպելիքները (օրինակ՝ բնական հյութեր, ջրեր և այլն) բազմաթիվ սառնարաններում ցուցադրելու և իրացնելու համար:

«Գազավորված (կարբոնացված), քաղցրացված ըմպելիքներ» ապրանքային շուկայում «Կոկա-կոլա» ընկերության վերը թվարկված գործողությունները Հանձնաժողովը որակել է որպես գերիշխող դիրքի չարաշահում և կիրառել պատասխանատվության միջոց:

Հանձնաժողովի կողմից դիտարկվել են նաև ծխախոտի շրջանառության բնագավառում գործունեություն իրականացնող գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծերը՝ մրցակցային օրենսդրությանը համապատասխանության տեսանկյունից: Մասնավորապես «Գրանդ Տոբակո» հայ-կանադական Հ/Ձ, «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» և «Գրանդ Դիլինգ» ՍՊ ընկերությունների վերաբերյալ սպառողներից և մրցակից տնտեսվարող սուբյեկտներից 2015 թվականի ընթացքում Հանձնաժողով բողոքներ են ստացվել առ այն, որ վերջիններս ստիպում են առևտրի օբյեկտներին իրացնել միայն իրենց արտադրած ծխախոտի տեսականին՝ փոխարենը խոստանալով տրամադրել նվերներ՝ իրացման որոշակի ծավալների ապահովման դեպքում: Հաշվի առնելով այն, որ բողոքներում նշված վարքագիծը կարող է պարունակել մրցակցության օրենսդրության հնարավոր խախտման հատկանիշներ՝ Հանձնաժողովն ընկերությունների նկատմամբ հարուցել է վարչական վարույթ և սկսել է իրականացնել ծավալուն ուսումնասիրություններ տվյալ ուղղությամբ: Ուսումնասիրության շրջանակներում արձանագրվել են բազմաթիվ փաստեր, որոնց համաձայն «Գրանդ Տոբակո» հայ-կանադական Հ/Ձ, «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» և «Գրանդ Դիլինգ» ՍՊ ընկերությունների կողմից առևտրի օբյեկտներին, կախված իրացման ծավալներից, տրամադրվել են նվերներ (հեռուստացույց, գազօջախ, փոշեկուլ և այլն)՝ պայմանով, որ առևտրի օբյեկտները հրաժարվեն իրացնել ծխախոտ արտադրող և ներմուծող այլ մրցակից ընկերությունների ծխախոտային արտադրանքը:

Իրականացված ուսումնասիրության ընթացքում «Գրանդ Տոբակո» հայ-

կանադական Հ/Ձ, «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» և «Գրանդ Դիլինգ» ՍՊ ընկերությունները դիմել են Հանձնաժողով՝ հայտնելով, որ մրցակից ներմուծող տնտեսվարող սուբյեկտները («Ավերս», «Ջեյ Թի Այ Արմենիա» ՓԲ և «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊ ընկերությունները) իրենց նկատմամբ կիրառում են հակամրցակցային գործողություններ և խնդրել ուսումնասիրել նաև վերջիններիս կողմից իրականացվող քաղաքականությունը:

Վերը նշվածը հիմք ընդունելով՝ Հանձնաժողովը դիտարկել է «Գրանդ Տոբակո» հայ-կանադական Հ/Ձ, «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» և «Գրանդ Դիլինգ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը, այդ թվում՝ ներմուծող ընկերությունների և առևտրի կետերի միջև ստենդների (ցուցափեղկերի) օգտագործմանը վերաբերող պայմանագրերը և պարզել, որ «Ջեյ Թի Այ Արմենիա» ընկերության պայմանագրերում արձանագրված մեխանիզմի համաձայն ստենդների (ցուցափեղկերի) միջոցով առևտրի կետերի կողմից հօգուտ «Ջեյ Թի Այ Արմենիա» ընկերության մարքեթինգային միջոցառումներ կազմակերպելու դիմաց առևտրի կետերը ստանում են համապատասխան վճար: Սակայն, համաձայն պայմանագրի դրույթների, նշված վճարը ենթակա է նվազեցման այն դեպքում, եթե առևտրի կետի կողմից նմանատիպ ծառայություններ (ծխախոտ արտադրող և ներմուծող այլ ընկերությունների ստենդերի տեղադրում) մատուցվում են նաև այլ ընկերությունների: Այսինքն, սահմանված մեխանիզմի համաձայն առևտրի կետերին «Ջեյ Թի Այ Արմենիա» ընկերության կողմից տրամադրվող վճարի չափը կախվածության մեջ է դրվում ծխախոտ արտադրող և ներմուծող այլ ընկերությունների ստենդների (ցուցափեղկերի) տեղադրված չլինելու հանգամանքից, ինչը կարող է բացասաբար ազդել մրցակցային միջավայրի վրա և հանդիսանալ մուտքի խոչընդոտ:

Վերը նշվածը հանդիսանում է մրցակցության դասական խնդիր, երբ շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող մի տնտեսվարող սուբյեկտը փորձում է իր ապրանքների իրացման ծավալներն ավելացնել ոչ թե որակի բարձրացման, գնային մրցակցության, մարքեթինգային հաջողված ռազմավարության իրականացման միջոցով, այլ սահմանափակում է շուկայում իր մրցակիցների ներկայացվածությունը, նրանց դուրս մղում շուկայից և սպառողներին զրկում մրցակցի ապրանքները ընտրելու հնարավորությունից: Տվյալ դեպքում Հանձնաժողովը նշված գործողությունները որակել է որպես գերիշխող դիրքի չարաշահում և «Գրանդ Տոբակո» հայ-կանադական Հ/Ձ, «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» և «Գրանդ Դիլինգ» ՍՊ, «Ջեյ Թի Այ Արմենիա» ՓԲ ընկերությունների նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոցներ:

Հանձնաժողովն ուսումնասիրել է նաև «ԱՄ Գրուպ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ «ԱՄ Գրուպ» ընկերություն) ներկայացված դիմումը, որի համաձայն «Հարավկովկասյան Երկաթուղի» ընկերությունը թույլ է տալիս գերիշխող դիրքի չարաշահում: Մասնավորապես դիմումում նշվում է, որ «ԱՄ Գրուպ» ընկերությունը «Հարավկովկասյան Երկաթուղի» ընկերությունից ձեռք է բերել 40 միավոր բեռնատար երկաթուղային վագոն, որը հետագայում պետք է վերանորոգվեր և արտահանվեր Վրաստանի Հանրապետություն: «ԱՄ Գրուպ» և «Հարավկովկասյան Երկաթուղի» ընկերությունների միջև կնքվել է վագոնների վերանորոգման պայմանագիր, սակայն վագոնների մի մասի վերանորոգումից հետո պարզվել է, որ վերջնական վերանորոգման գինը բավականին տարբերվում է նախնական գնից, ինչն էլ հիմք է հանդիսացել Հանձնաժողով դիմելու համար:

Վարչական վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Հարավկովկասյան Երկաթուղի» ընկերությունը «Երկաթուղային վագոնների վերանորոգման աշխատանքներ և համապատասխան դրոշմավորման ծառայություններ» ապրանքային շուկայում ունի մենաշնորհային դիրք:

Նաև պարզվել է, որ վերջինս երկաթուղային վագոնների վերանորոգման իր գործունեությունը կազմակերպում է այնպես, որ առաջնահերթ կարգով վերանորոգվում են սեփական վագոնները, իսկ այլ տնտեսվարող սուբյեկտների վագոնները վերանորոգվում են ազատ արտադրական հզորությունների առկայության դեպքում կամ այդ տնտեսվարող սուբյեկտների համար ոչ ձեռնտու պայմաններով (ոչ աշխատանքային օրերին, տարվա վերջին և այլն):

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում Հանձնաժողովն ամրագրել է, որ «Հարավկովկասյան Երկաթուղի» ընկերության կողմից վագոնների վերանորոգման աշխատանքների պլանավորման և իրականացման ընթացքում այլ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ խտրական պայմանների առաջարկը կամ կիրառումն առաջացնում է անհավասար մրցակցային իրավիճակ, որը հանդիսանում է մենաշնորհային դիրքի չարաշահում: Արդյունքում Հանձնաժողովը «Հարավկովկասյան Երկաթուղի» ընկերության նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց և հանձնարարել է հետագայում բացառել օրենքի խախտումները:

Հաշվետու ժամանակահատվածում նաև շարունակվել է համագործակցությունն այլ պետական մարմինների կառուցվածքային ստորաբաժանումների հետ, քանի որ իրականացվող ուսումնասիրությունների արդյունքները փաստում են, որ շատ դեպքերում հավասար մրցակցությունը խաթարող գործոնները ծնող պատճառներն առնչվում են այլ պետական մարմինների իրավասություններին, նրանց կողմից ընդունվող իրավական ակտերին, տրամադրվող լիցենզիաներին և այլն: Այս ուղղությամբ 2015 թվականի ընթացքում մի շարք ոլորտներում իրականացվել են ուսումնասիրություններ: Չնայած այն հանգամանքին, որ այդ ոլորտի ապրանքային շուկաներում մրցակցային խնդիրներ չեն հայտնաբերվել, այնուամենայնիվ բացահայտված խնդիրները գտնվել են այլ պետական մարմինների իրավասությունների ներքո և իրենց ազդեցությունն են թողել մրցակցային միջավայրի վրա: Ուստի այդ ուսումնասիրությունների արդյունքները տրամադրվել են համապատասխան իրավասու մարմիններին՝ վերջիններիս իրավասությունների և լիազորությունների կարգավորման շրջանակներում գտնվող և տարբեր ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող խնդիրների կարգավորման նպատակով:

Մրցակցության պաշտպանության, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից կարևոր խնդիրներից է հանդիսանում անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտումը, կանխարգելումը և դադարեցումը:

Այս առումով 2015 թվականի ընթացքում Հանձնաժողովն իր սեփական նախաձեռնությամբ իրականացրել է ուսումնասիրություններ և դիտանցումներ (այդ թվում հսկիչ գնումներ), ինչպես նաև ստացել է մի շարք դիմում-բողոքներ, որոնց արդյունքում հարուցվել է թվով 38 վարչական վարույթ: Հարուցված վարչական վարույթների ընթացքում բացահայտվել է տնտեսվարող սուբյեկտների կողմից անբարեխիղճ մրցակցության դրսևորման 22 դեպք, որոնց նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց, իսկ հարուցված 4 վարչական վարույթներ դեռևս ընթացքի մեջ են: Հարկ է նշել, որ ուսումնասիրված 12 դեպքերում Օրենքի խախտումներ չեն հայտնաբերվել:

Անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման ուղղությամբ Հանձնաժողովի կողմից կատարվող ուսումնասիրությունները փաստում են, որ ՀՀ-ում առավել հաճախ դրանք դրսևորվում են SMS կարգի հաղորդագրությունների, բուկլետների, վահանակների, պաստառների, ինտերնետային կայքերի միջոցով և զանգվածային լրատվական միջոցներով տարածվող գովազդներում: Կատարված ուսումնասիրություններից ներկայացնենք հետևյալները.

1. Հանձնաժողովն ուսումնասիրել է «Օրանժ Արմենիա» ՓԲ ընկերության

(այսուհետ՝ «Օրանժ Արմենիա» ընկերության) կողմից հասարակության մոլորեցմանն ուղղված գործողությունները: Մասնավորապես, «Օրանժ Արմենիա» ընկերության վաճառասրահներում ներկայացված գովազդային վահանակների վրա հեռախոսների վերաբերյալ տեղեկատվությունից բացի առկա է եղել տեղեկատվություն առ այն, որ 24 ամսով բաժանորդագրվելու դեպքում մի շարք մոդելների հեռախոսներ կարելի է ձեռք բերել 1 դրամ գնով: Հանձնաժողովի կողմից իրականացված դիտանցումների և ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ առաջարկվող փաթեթն իր մեջ ներառում է երեք սակագնային պլան՝ համապատասխանաբար 4 000, 6 000 և 10 000 դրամ արժողությամբ: Միաժամանակ նշենք, որ գովազդային պաստառների վրա որևէ նշում չի եղել, թե հեռախոսը 1 դրամով ձեռք բերելու դեպքում սպառողը փաթեթի որ սակագնային պլանին պետք է միանա, մինչդեռ հեռախոսների մի շարք մոդելներ հնարավոր է ձեռք բերել 1 դրամով բացառապես 10 000 և (կամ) 6 000 դրամ արժողությամբ սակագնային պլանին բաժանորդագրվելու դեպքում: Ելնելով ուսումնասիրությունների արդյունքներից՝ Հանձնաժողովը «Օրանժ Արմենիա» ընկերության կողմից գովազդի ընթացքում ներկայացվող առաջարկի վերաբերյալ թերի կամ ոչ լիարժեք տեղեկատվություն ներկայացնելու գործողությունը որակել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ հասարակության մոլորեցում և կիրառել պատասխանատվության միջոց:

2. Հանձնաժողովն ուսումնասիրություններ է իրականացրել նաև քաղաքացու կողմից «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության (այսուհետ՝ «Փարքինգ Սիթի Սերվիս» ընկերություն) գործունեության վերաբերյալ ներկայացված դիմումի հիման վրա: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Փարքինգ Սիթի Սերվիս» ընկերության կողմից վճարովի ավտոկայանատեղերի տեղեկատվական ցուցանակում նշված տեղական տուրքի տարեկան դրույքաչափի վերաբերյալ «1 տարի-12 000 դրամ» արտահայտությունը կարող է մոլորեցնել սպառողներին, քանի որ ցուցանակում բացակայում է լրացուցիչ տեղեկատվությունն այն մասին, որ 12 000 դրամ վճարելով սպառողը հնարավորություն է ստանում օգտվելու համապատասխան ծառայությունից միայն ընթացիկ տարվա համար՝ վճարման պահից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ: Նշված գործողությունը Հանձնաժողովը որակել է որպես հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն և «Փարքինգ Սիթի Սերվիս» ընկերության նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց:

3. Հանձնաժողովն ուսումնասիրել է «ՍՊՍ Սիգարոն» ՍՊ ընկերության (այսուհետ՝ «ՍՊՍ Սիգարոն» ընկերություն) կողմից իրականացվող գովազդի վերաբերյալ քաղաքացու կողմից բարձրացված խնդիրը: Համաձայն դիմումատուի «ՍՊՍ Սիգարոն» ընկերությունն իր թողարկած ծխախոտն անվանել է որպես աշխարհում ամենաանվտանգը, ինչպես նաև գովազդել է իր կողմից թողարկված նոր սերնդի «Cigaronne» ծխախոտը՝ նշելով, որ աշխարհում առաջին անգամ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ կատարվում է ծխախոտի բազմափուլ մաքրազատում, որի արդյունքում հումքից հեռացվում են քաղցկեղածին թունավոր նյութերը՝ էապես նվազեցնելով մի շարք հիվանդությունների առաջացման ռիսկերը: Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում գովազդում ներկայացված տեղեկությունները չեն ապացուցվել: Այդ կապակցությամբ, Հանձնաժողովը վերը նշված տեղեկատվությունը որակել է որպես հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն և «ՍՊՍ Սիգարոն» ընկերության նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց:

4. «ԱրմենՏել» ՓԲ ընկերությունը բողոք է ներկայացրել Հանձնաժողով՝ հայտնելով, որ մի շարք զանգվածային լրատվության միջոցներում մրցակից «Օրանժ Արմենիա» ընկերության կողմից տարածվում են պաշտոնական հաղորդագրություններ՝ վերջինիս

կողմից մատուցվող ռոումինգ ծառայության լավագույնը լինելու վերաբերյալ: Մինչդեռ Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված բովանդակությամբ գովազդի տարածման համար հիմքեր առկա չեն: Վերը նշվածը հիմք ընդունելով՝ Հանձնաժողովը «Օրանժ Արմենիա» ընկերության կողմից կատարվող գովազդը որակել է որպես հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն և վերջինիս նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց:

5. Նմանօրինակ մեկ այլ ուսումնասիրություն Հանձնաժողովն իրականացրել է «Համազգային վստահություն» խորհրդի (Խորհուրդ) կողմից անցկացվող համանուն մրցանակաբաշխության վերաբերյալ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Խորհրդի կողմից անցկացվող ամենամյա մրցանակաբաշխության ընթացքում շնորհվում են «Համազգային վստահություն» մրցանակներ տարբեր ոլորտներում գործող տնտեսվարող սուբյեկտներին, ինչպես նաև անհատներին: Մասնավորապես պարզվել է, որ 2014 թվականին մի շարք ոլորտներում Խորհրդի կողմից շնորհվել են «լավագույն», «բացառիկ», «առաջատար», «բացարձակ առաջատար» և այլ նմանատիպ արտահայտություններ պարունակող անվանակարգերում մրցանակներ: Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկել է այն եզրակացության, որ Խորհրդի կողմից կազմակերպվող «Համազգային վստահություն» մրցանակաբաշխության շրջանակներում «լավագույն», «բացառիկ», «առաջատար», «բացարձակ առաջատար» և այլ նմանատիպ արտահայտություններով անվանակարգեր ստեղծելը և մրցանակներ շնորհելը, առանց դրա որոշման և ընտրության մեթոդաբանության ամբողջական ներկայացման, կարող է մոլորեցնել հասարակությանը: Արդյունքում խորհրդի կողմից կատարված գործողությունները Հանձնաժողովը որակել է որպես հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն և Խորհրդի նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց:

Հանձնաժողովը հաշվետու տարվա ընթացքում բացահայտել է նաև հասարակության մոլորեցման՝ անբարեխիղճ մրցակցության դրսևորման մի շարք դեպքեր, որոնք կապված են ապրանքի բնութագրերի չհիշատակելու և մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման իրավունքի խախտումների հետ:

Հանձնաժողովը 2015 թվականի ընթացքում շարունակել է ուսումնասիրությունները համակենտրոնացումների, այդ թվում՝ չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման ուղղությամբ, որի նպատակն է թույլ չտալ նույն կամ միմյանց հետ փոխկապակցված ոլորտներում գործող տարբեր ընկերությունների՝ միավորումների միջոցով օրենսդրությամբ արգելված խոշորացումը և գերիշխող դիրքի ամրապնդումը: Հանձնաժողովի կողմից 2015 թվականի ընթացքում պատասխանատվության են ենթարկվել թվով 19 տնտեսվարող սուբյեկտներ, որոնք սահմանված կարգով չեն հայտարարագրել համակենտրոնացումները:

Միաժամանակ Հանձնաժողովը շարունակել է տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա համակենտրոնացման դեպքերի ուսումնասիրությունը: Այս առումով նշված ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից կայացվել են համակենտրոնացումների թույլտվության 25, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտներին անձանց խումբ համարելու 18 որոշումներ:

Տնտեսական մրցակցության միջավայրի կարգավորման և վերահսկման տեսանկյունից կարևորվում են նաև Հանձնաժողովի կողմից կատարվող աշխատանքները՝ կապված դատական ատյաններում բողոքարկված որոշումների պաշտպանության հետ: Այդ կապակցությամբ 2015 թվականի ընթացքում Հանձնաժողովը շարունակել է իրականացնել դատական ներկայացուցչություն Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների դատական կարգով բողոքարկման արդյունքում իրականացված դատական վարույթներով: Մասնավորապես, 2015 թվականի ընթացքում ավարտվել են

Հանձնաժողովի՝ նախկինում բողոքարկված որոշումների թվով 10 դատական վարույթներ, որոնց արդյունքում դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռներով և որոշումներով Հանձնաժողովի բողոքարկված որոշումները թողնվել են անփոփոխ: 2015 թվականի ընթացքում բողոքարկվել է Հանձնաժողովի թվով 4 որոշում, որոնցից 1-ը մնացել է անփոփոխ, իսկ մնացած 3-ով դատական քննությունը շարունակվում է:

3.1 Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների իրականացման ընթացքի վերլուծությունը

Մրցակցային միջավայրի բարելավմանն ուղղված առաջարկների շրջանակներում կարևորվում է օրենսդրական փոփոխությունների իրականացումը: Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության կապակցությամբ ՀՀ-ում գործող իրավական ակտերը ԵՏՄ-ում գործող իրավական ակտերին համապատասխանեցնելու գործընթացի շրջանակներում Հանձնաժողովի կողմից 2015 թվականին մշակվել են ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ կառավարություն՝ հետագա քննարկումների նպատակով: Հանձնաժողովի կողմից հաշվետու տարվա ընթացքում կատարվել են օրենսդրական կատարելագործման այլ աշխատանքներ ևս, որոնք դրսևորվել են ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակմամբ և ընդունմամբ:

Մրցակցային իրավիճակի բարելավման նպատակով Հանձնաժողովն աշխատանքներ է իրականացրել սպառողների և բիզնեսի շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով տարբեր լրատվամիջոցների, ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով պարբերաբար հեռարձակվել են տեղեկատվական-քարոզչական հոլովակներ, ինչպես նաև տպագրվել և տարածվել են տեղեկատվական նյութեր և ուղեցույցներ: Հանձնաժողովի պաշտոնական կայք-էջը նախորդ տարի մեկնարկած վերազինման աշխատանքներից հետո վերագործակվել է՝ հասարակությանը տրամադրելով մշտապես թարմացվող տեղեկատվություն:

Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված աշխատանքների շրջանակներում 2015 թվականին պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ Հանձնաժողովին կից Հասարակական խորհրդի անդամների հետ: Գործարար համայնքի ներկայացուցիչների, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների և ոլորտային տարբեր մարմինների ներկայացուցիչների հետ քննարկվել են մրցակցության ոլորտին առնչվող խնդրահարույց հարցեր: Այս առումով, կարևորվում են մասնակիցների առաջարկները, որոնց հիման վրա Հանձնաժողովը վերանայում է իր աշխատանքային գործունեության ուղղությունները և դրանք դարձնում առավել նպատակային ու արդյունավետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրներին, այդ թվում՝ գերիշխող դիրքի չարաշահման բացահայտմանը, հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերմանը և անբարեխիղճ մրցակցության գործողությունների կանխարգելմանը, մուտքի խոչընդոտների բացահայտմանը, համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության ուժեղացմանն առնչվող հարցեր:

Մրցակցային միջավայրի բարելավման ուղղությամբ կարևորվում է նաև Հանձնաժողովի կողմից տարբեր ոլորտներում և ապրանքային շուկաներում կատարվող ուսումնասիրությունները, որոնք նպատակ ունեն պարզելու առկա մրցակցային իրավիճակը, դրանցում գործունեության իրականացման հնարավոր խոչընդոտները, իրացման ծավալների վրա ազդող գործոնները և այլն: Նշված ուղղությամբ հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովն իրականացրել է նպարեղենի և մսամթերքի ոլորտների ուսումնասիրություններ:

Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ

մրցակցային խնդիրները մեծապես կապված են նաև այլ պետական մարմինների գործունեության հետ: Ուստի ակնհայտ է, որ Հանձնաժողովն ի վիճակի չէ միայնակ պայքարելու առկա մրցակցային խնդիրների լուծման ուղղությամբ և անհրաժեշտ են բոլոր իրավասու պետական մարմինների ակտիվ և համակողմանի գործողությունները՝ մրցակցային իրավիճակի բարելավման նպատակով: Այդ իսկ պատճառով, Հանձնաժողովի կողմից բացահայտված այն բոլոր խնդիրները, որոնք բացասաբար են անդրադարձել մրցակցային միջավայրի վրա, սակայն գտնվել են Հանձնաժողովի լիազորությունների շրջանակից դուրս, Հանձնաժողովը նշված խնդիրների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքները տրամադրել է համապատասխան պետական մարմիններին:

Գլուխ 4. Հանձնաժողովի 2015 թվականի գործունեության ֆինանսական հաշվետվություն

Հանձնաժողովի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Հայաստանի Հանրապետության 2015 թվականի բյուջեով՝ որպես Հանձնաժողովի աշխատակազմի պահպանման ծախս, նախատեսվել է 306.298,60 հազար ՀՀ դրամ, ծախսվել է 298.359,17 հազար ՀՀ դրամ:

Հանձնաժողովի տարեկան ծախսերը

(Հազար դրամ)

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի ***Անվանումը***	***Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ***	***Դրամարկղային ծախս***
Ընթացիկ ծախսեր	*306.298,60*	*298.359,17*
Աշխատողների աշխատավարձեր և այլ հավելավճարներ	*259.604,40*	*259.604,40*
Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում	*10.909,80*	*10.909,80*
Էներգետիկ ծառայություններ	*6.322,50*	*3.649,79*
Կոմունալ ծառայություններ	*130,50*	*107,17*
Կապի ծառայություններ	*6.436,30*	*4.847,02*
Ապահովագրական ծախսեր	*200,00*	*200,00*
Տեղեկատվական ծառայություններ	*827,80*	*604,86*
Ներքին գործուղումներ	*2.800,00*	*2.800,00*
Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	*5.017,20*	*4.953,20*
Համակարգիչների ծրագրային ծառայություններ	*200,00*	*145,00*
Ներկայացուցչական ծախսեր	*500,00*	*500,00*
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	*2.032,00*	*00,00*
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	*2.826,00*	*2.824,00*
Դրասենյակային նյութեր և հագուստ	*1.420.70*	*804,08*
Տրանսպորտային նյութեր	*4.745,00*	*4.207,60*
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	*152,00*	*152,00*
Հատուկ նպատակային այլ նյութեր	*2.000.00*	*2.000,00*
Այլ հարկեր	*124,15*	*0,00*
Պարտադիր վճարներ	*50,25*	*50,25*